ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դպրոցական օլիմպիադա – 2024թ.

Աշխարհագրություն – II փուլ

Տևողությունը՝ 120 րոպե

Գնահատման քայլը՝ 0,25 կամ 0,5 միավոր

Առաջադրանքներ

1. Գրել այն երկրների համարները, որոնց ուրբանիզացման տեմպերը բարձր են……..2,0 միավոր
   1. Ճապոնիա 2. Իրան 3. Իտալիա 4. Մեծ Բրիտանիա
   5. Նիգերիա 6. Հայիթի 7. Ռուսաստան 8. Անգոլա

2. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն փոխակերպային ծագում……2,0
   1. բազալտ 2. մարմար 3. գրանիտ 4. կերակրի աղ
   5. կվարց 6. խճաքար 7. գնեյս 8. բյուրեղային թերթաքար

3. Լեռան ստորոտը գտնվում է ծովի մակարդակից 2400 մ-ի վրա: Ստորոտին օդի ջերմաստիճանը 18 °C է, իսկ գագաթին՝ 12 °C: Հաշվարկը կատարել 6 °C - ով: Որոշել……...……...2,0
   ա) լեռան հարաբերական բարձրությունը,
   բ) լեռան բացարձակ բարձրությունը:

4. Երկրի բնակչության թիվը 2 000 000 է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 50 000 մարդ է, իսկ մահացածներինը՝ 20 000: Որոշել……...……..……..2,0
   ա) բնակչության բացարձակ բնական աճը,
   բ) բնական աճի գործակիցը (‰ - ով):

5. Տրված են բոլոր ութ մոլորակները: Վերադասավորել երկրային խմբի մոլորակները՝ Արեգակից ունեցած հեռավորության աճման կարգով……1,0
   1. Հրատ 2. Լուսնթագ 3. Փայլածու 4. Երկիր
   5. Ուրան 6. Արուսյակ 7. Նեպտուն 8. Երևակ

6. Տրված պետությունները դասավորել ատոմային էներգիայի արտադրության նվազման կարգով……....1,0
   1) ԱՄՆ 2) Ուկրաինա 3) Ճապոնիա 4) Ռուսաստան

7. Աշխարհագրության արդի խնդիրներից չէ (չեն)……...0,5
   1) Երևույթների առաջացման պատճառների պարզաբանումները:
   2) Հայտնագործությունները և աշխարհի նկարագրությունը:
   3) Երևույթների բացատրությունները:
   4) Երևույթների հետևանքների կանխատեսումները:

8. **Թթվային անձևրների առաջացման պատճառ է (են)……...0,5**
   1) Մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը:
   2) Մետաղաձուլական ձեռնարկություններից ծծմբային գազերի արտանետումները:
   3) Պեստիցիդների չարաշահումը:
   4) Գյուղատնտեսության ինտենսիվացումը:

9. **Կենդանական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ……..0,5**
   1) Կենսատեխնիկական միջոցառումների կիրառումը:
   2) Հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:
   3) Արոտաշրջանառության կազմակերպումը:
   4) Կլիմայավարժեցումը և վերաբնակեցումը:

10. **Այն բոլոր օրգանիզմները, որոնք սնվում են արդեն սինթեզված օրգանական նյութերով, կոչվում են……0,5**
   1. պրոդուցենտներ
   2. կոնսումենտներ
   3. ռեդուցենտներ
   4. պեստիցիդներ

11. **Ժամը քանի՞սը կլինի Տոկիոյում (արլ. ե. 140 °), եթե նույն պահին Պրահայում (արլ. ե. 14 °) ժամը 15 : 35 է……1,0**
   1) 17:35 2) 19:35 3) 21:35 4) 23:35

12. **Որքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 500 տոննա զորշ ածխի այրումից, եթե նրա ջերմային գործակիցը 0,5 է……...1,0**
   1) 500 հազ. կվտ 2) 750 հազ. կվտ 3) 1,5 մլն կվտ 4) 1,0 մլն կվտ

13. **Ընտրել հանքավայրերի և օգտակար հանածոների համապատասխանության ճիշտ շարքը.....1,0**

ա. Մեղրաձոր, Կարին	1. պղնձահիրաքար
բ. Սվարանց, Դաշքեսան	2. մարմար
գ. Ալավերդի, Կապան	3. ոսկի
դ. Երզնկա, Խոր Վիրապ	4. երկաթաքար

   1) ա-3, բ-4, գ-1, դ-2
   2) ա-3, բ-2, գ-4, դ-1
   3) ա-1, բ-3, գ-2, դ-4
   4) ա-4, բ-1, գ-2, դ-3

14. **Ընտրել «գետ - վտակներ» համապատասխանության ճիշտ շարքը.....……..1,0**

ա. Քասաղ	1. Եղեգիս, Ելփին
բ. Արփա	2. Գետիկ, Բլդան
գ. Հրազդան	3. Գեղարոտ, Ամբերդ
դ. Աղստև	4. Մարմարիկ, Գետառ

   1) ա-4, բ-1, գ-2, դ-3
   2) ա-3, բ-4, գ-1, դ-2
   3) ա-3, բ-1, գ-4, դ-2
   4) ա-4, բ-3, գ-2, դ-1

15. Հողաբարելավման միջոցառում չէ (չեն)……..……0,5

1) քարամաքրումը,
2) հակաէրոզիոն միջոցառումները,
3) քիմիական մելիորացիան,
4) թեք լեռնալանջերի երկայնակի հերկումը:

16. Մթնոլորտի աղտոտվածության հետևանք չէ.....0,5

1. թթվային անձրևը
2. սմոգը
3. ջերմոցային էֆեկտը
4. ջերմաստիճանային շրջադասությունը

17. ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....……..……..…..…1,5

1. Արփայի գոգավորությունը գտնվում է ՀՀ Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում:
2. Եղնախաղի լեռնաշղթան ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
3. Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթան:
4. Սևանա լիճը արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
5. Փամբակի և Ծաղկունյաց լեռները մտնում են ներքին շարի մեջ:
6. Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր գագաթը Ծղուկն է:

18. Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ….....……..……..…1,5

1. Տնտեսապես ակտիվ բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղված է արդյունաբերության մեջ:
2. Տնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
3. Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման և քիմիացման բարձր մակարդակով:
4. Արտահանման մեջ գերակշռում են բնական գազը և նավթամթերքները:
5. Տնտեսությունը գտնվում է հետինդուստրիալ փուլում:
6. Գերմանացիները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբին:

Պատասխանների թերթիկ

Հարց	Պատասխան	Հարց	Պատասխան
1.	2 5 6 8	**9.**	3
2.	2 5 7 8	**10.**	2
3.	ա) 1000 բ) 3400	**11.**	4
4.	ա) 30 000 բ) 15 ‰	**12.**	1
5.	3 6 4 1	**13.**	1
6.	1 3 4 2	**14.**	3
7.	2	**15.**	4
8.	2	**16.**	4
17.	1. սխալ է 4. սխալ է 2. ճիշտ է 5. ճիշտ է 3. սխալ է 6. ճիշտ է	**18.**	1. սխալ է 4. սխալ է 2. ճիշտ է 5. ճիշտ է 3. ճիշտ է 6. սխալ է